# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N: ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-25/8-1

ք. Երևան «11» փետրվարի 2025 թ.

ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Աբգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նորակ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Կատվալյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է դարձիչ շարժիչի, տիրիստորային ընդարձակիչների, ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Կապալառուն պատասխանատվություն է կրում մինչև 2025 թ. ոռոգման շրջանի ավարտը չափաբաժնում նշված բոլոր պոմպակայաններում վթարա-վերականգնողական աշխատանքները կատարման համար՝ հնարավորինս կարճ ժամկետներում, անկախ վթարի ժամից, եղանակային և այլ պայմաններից:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագրի խախտումը էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում

Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 10253880 (տասը միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից հետո:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները,

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագիրը շրջանակային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարրին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են ձեռք բերվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է _10_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

------------------------------ Ա. ԱԲԳԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Նորակ» ՍՊԸ
Արարատի մարզ,գ.Մխչյան 25փ, թիվ 2
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
h/h 220013330737000, ՀՎՀՀ 04203321
Տնօրեն

------------------------------ ԿԱՍՏՎԱԼՅԱՆ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« 11 » փետրվարի 2025 թ. կնքված
N: ՀՀՏԿԵՆ-Ձ-ԳՀԱԾՁԲ-25/8-1 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | կատարման | |
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 45221700/501 | 1-դարձիչ շարժիչի, տիրիստորային ընդարձակիչներ, ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքներ | դրամ | 5823960 | 5823960 | 1 | ՀՀ Արարատի մարզ | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 01.04.2025 թ |
| 2 | 45221700/502 | 2-դարձիչ շարժիչի, տիրիստորային ընդարձակիչներ, ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքներ | դրամ | 4429920 | 4429920 | 1 | ՀՀ Արարատի և Արմավիրի մարզեր | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 01.04.2025 թ |

**Ագատի I աստիճանի արմավային էլեկտրասարքավորումների թողարկման- կարգաբերման աշխատանքներ**

- Ուժային տրանսֆորմատոր 35 ԿՎ լարման 100կվա, 1600 կվա, 2500 կվա հզորության. փաթույթային մեկուսացման և օհմային դիմադրության չափում, տրանսֆորմատորի յուղի խոնավության, ծակման լարման ստուգում և լրալցում, մեկուսիչների ստուգում, հողանցման ստուգում-2 հատ
- Յուղային անջատիչի ստուգում կարգաբերում. վերանորոգում և յուղի փոխում- 3 հատ
- Հոսանքի մաքսիմալ պաշտպանության ստուգում-- 2 կոմպլեկտ
- ԿՌՈՒ-ների բջիջների մեխանիկական թերությունների վերացում, կարգաբերում և կոնտակտային մասերի ստուգում (փոխարինում) – 3 հատ
- Այրված ԿՌՈՒ-ի կոնտակտային մասերի և մալուխների փոխարինում, բջիջի կարգաբերում – 1 կոմպլեկտ
- Լարման մինիմալ պաշտպանության ստուգում- 1 կոմպլեկտ
- Էլ. շարժիչների փաթույթների մեկուսացման դիմադրության չափում, հողանցման ստուգում, փորձարկում պարապ ընթացքի ռեժիմում – 4 հատ
- Երկրորդային շղթաների կամուրջացում, ստուգում - 4 հատ
- Օպերատիվ շղթաների բաժանիչների ստուգում, նորոգում – 3 հատ
- 800 կվտ և 400 կվտ (6000վ) էլ շարժիչների մուտքի մալուխի ծայրակալների և մեկուսիչների ստուգում (փոխարինում) և էլ. հանգույցի կարգաբերում -4 հատ

**Ագատի II աստիճանի արմավային էլեկտրասարքավորումների թողարկման- կարգաբերման աշխատանքներ**

- Ուժային տրանսֆորմատոր 35 ԿՎ լարման 100 կվա 1600 կվա 2500 կվա հզորության. փաթույթային մեկուսացման և օհմային դիմադրության չափում, տրանսֆորմատորի յուղի խոնավության, ծակման լարման ստուգում և լրալցում, մեկուսիչների ստուգում, հողանցման ստուգում– 2 հատ
- Յուղային անջատիչների ստուգում, կարգաբերում, վերանորոգում, յուղի փոխում-- 3 հատ
- Հոսանքի մաքսիմալ պաշտպանության ստուգում- 2 կոմպլեկտ
- ԿՌՈՒ-ների բջիջների մեխանիկական թերությունների վերացում և կարգաբերում, կոնտակտային մասերի ստուգում (փոխարինում) – 3 հատ
-Լարման մինիմալ պաշտպանության ստուգում- 2 կոմպլ.

- Էլ. շարժիչների փաթույթների մեկուսացման դիմադրության չափում, հողանցման ստուգում, փորձարկում պարապ ընթացքի ռեժիմում -4 հատ
- Երկրորդային շղթաների կամուտացում, ստուգում, նորոգում- 4 հատ
- Օպերատիվ շղթաների բաժանիչների ստուգում – 3 հատ
- 630 կվտ և 6000վ էլ. շարժիչների մուտքի մալուխի ծայրակալների, մեկուսիչների ստուգում (փոխարինում) և էլ. հանգույցի կարգաբերում) – 2 հատ

**<u>Ագատի III աստիճանի արմպակայանի էլեկտրասարքավորումների թողարկման- կարգաբերման աշխատանքներ</u>**

- Տրանսֆորմատոր 6/0,4 մինչև 160 կվա, փաթույթի մեկուսացման և օհմային դիմադրության չափում տրանսֆորմատորի յուղի խոնավության, ծակման լարման ստուգում և լրալցում, մեկուսիչների ստուգում, հողանցման ստուգում-1 հատ
- Յուղային անջատիչների ստուգում, կարգաբերում, վերանորոգում, յուղի փոխում– 2 հատ
- Հոսանքի մաքսիմալ պաշտպանության ստուգում -2 կոմպլեկտ
- ԿՌՈՒ-ների բջիջների մեխանիկական թերությունների վերացում, կարգաբերում և կոնտակտային մասերի ստուգում (փոխարինում)-2 հատ
- Լարման մինիմալ պաշտպանության ստուգում -2 կոմպլեկտ
- Էլ. շարժիչների փաթույթների մեկուսացման դիմադրության չափում, հողանցման ստուգում, փորձարկում պարապ ընթացքի ռեժիմում- 3 հատ
- Երկրորդային շղթաների կամուտացում, ստուգում, նորոգում-3 հատ
- 1000կվտ, 6000 վոլտ էլ. շարժիչների մուտքի մալուխի ծայրակալների և մեկուսիչների ստուգում (փոխարինում) – 3 հատ

**<u>Ագատի IV աստիճանի արմպակայանի էլեկտրասարքավորումների թողարկման- կարգաբերման աշխատանքներ</u>**

- Ուժային տրանսֆորմատոր 10/6 ԿՎ լարման 4000 ԿՎԱ հզորության. փաթույթային մեկուսացման և օհմային դիմադրության չափում, տրանսֆորմատորի յուղի խոնավության, ծակման լարման ստուգում և լրալցում, մեկուսիչների ստուգում, հողանցման ստուգում – 1 հատ
- Լարման մինիմալ պաշտպանության ստուգում- 1 կոմպլեկտ
- Հոսանքի մաքսիմալ պաշտպանության ստուգում –1 կոմպլեկտ
- Էլ. շարժիչի փաթույթների մեկուսացման դիմադրության չափում, հողանցման ստուգում, փորձարկում պարապ ընթացքի ռեժիմում որոշում – 1 հատ
- Մալուխների փորձարկում բարձր լարումով՝ շարժիչների պարապ ընթացքի ռեժիմում -1 հատ
- 1000 կվտ , 6000 վոլտ էլ. շարժիչների մուտքի մալուխի ծայրակալների ստուգում (փոխարինում) և էլ. հանգույցի կարգաբերում– 1 հատ
- Օպերատիվ շղթաների անջատիչի նորոգում և կարգաբերում -1 հատ

**<u>Ակնալճի արմպակայանի էլեկտրասարքավորումների թողարկման- կարգաբերման աշխատանքներ</u>**

- Լարման մինիմալ պաշտպանության ստուգում- 1 կոմպլեկտ
- Յուղային անջատիչների ստուգում, կարգաբերում, վերանորոգում, յուղի փոխում- 2 հատ
- Հոսանքի մաքսիմալ պաշտպանության ստուգում- 2 կոմպլեկտ
- Մալուխների փորձարկում բարձր լարումով շարժիչների պարապ ընթացքի ռեժիմում- 3 հատ
- Էլ. շարժիչների փաթույթների մեկուսացման դիմադրության չափում, հողանցման ստուգում, փորձարկում պարապ ընթացքի ռեժիմում- 4 հատ
- 75 կվտ , 315 կվտ, 400 կվտ,500 կվտ, 6000 վոլտ էլ. շարժիչների մուտքի մալուխի ծայրակալների, մեկուսիչների ստուգում (փոխարինում) և էլ. հանգույցի կարգաբերում– 2 հատ

**<u>Մխչյան I աստիճանի արմպակայանի էլեկտրասարքավորումների թողարկման- կարգաբերման աշխատանքներ</u>**

- Ուժային տրանսֆորմատոր 6/0,4 ԿՎ լարման 630 ԿՎԱ հզորության. փաթույթային մեկուսացման և օհմային դիմադրության չափում, տրանսֆորմատորի յուղի խոնավության, ծակման լարման ստուգում և լրալցում, մեկուսիչների ստուգում, հողանցման ստուգում-1 հատ
- Հոսանքի մաքսիմալ պաշտպանության ստուգում -2 կոմպլեկտ
- լարման մինիմալ պաշտպանության ստուգում -2 կոմպլեկտ
- Մալուխների փորձարկում բարձր լարումով, շարժիչների պարապ ընթացքի ռեժիմում- 5 հատ
- Էլ. շարժիչների փաթույթների մեկուսացման դիմադրության չափում, հողանցման ստուգում, փորձարկում պարապ ընթացքի ռեժիմում-5 հատ
- Երկրորդային շղթաների կամուտացում, ստուգում, նորոգում- 4 հատ
- ՏՎՈՒ-ների ընթացիկ նորոգում (մալուխների, կոնտակտորների, պլատաների մաքրում նորոգում), կարգաբերում, գործարկում -4 հատ
- 1500 կվտ և 1600 կվտ էլ. շարժիչների մուտքի մալուխի ծայրակալների, մեկուսիչների ստուգում (փոխարինում) և էլ. հանգույցի կարգաբերում– 6 հատ

**<u>Մխչյան II աստիճանի արմպակայանի էլեկտրասարքավորումների թողարկման- կարգաբերման աշխատանքներ</u>**

- Ուժային տրանսֆորմատոր 6/0,4 հզոր. 400 ԿՎԱ փաթույթային մեկուսացման և օհմային դիմադրության չափում, տրանսֆորմատորի յուղի խոնավության, ծակման լարման ստուգում և լրալցում, մեկուսիչների ստուգում, հողանցման ստուգում- 1 հատ
- Հոսանքի մաքսիմալ պաշտպանության ստուգում- 2 կոմպլեկտ
- Լարման մինիմալ պաշտպանության ստուգում- 2 կոմպլեկտ
- Մալուխների փորձարկում բարձր լարումով՝ շարժիչների պարապ ընթացքի ռեժիմում – 4 հատ
- Էլ. շարժիչների փաթույթների մեկուսացման դիմադրության չափում, հողանցման ստուգում, փորձարկում պարապ ընթացքի ռեժիմում– 4 հատ
- Երկրորդային շղթաների կամուտացում, ստուգում, նորոգում – 2 հատ

- ՏՎՈՒ- ների ընթացիկ նորոգում, սպասարկում (մալուխների, կոնտակտորների, պլատաների մաքրում նորոգում և փոխարինում), կարգաբերում, գործարկում - 2 հատ
- 1800 կվտ և 1600 կվտ էլ. շարժիչների մուտքի ծայրակալների ստուգում, փոխարինում և էլ. հանգույցի կարգաբերում մեկուսիչների (փոխարինում) և էլ. հանգույցի կարգաբերում– 4 հատ

**<u>Ռանչպար I ստորակայանի տրամադրման էլեկտրասարքավորումների թողարկման- կարգաբերման աշխատանքներ</u>**

- ABB համակարգի ռեստավրում, ռելեպաշտպանության կամ միջանկյալ պաշտպանողական ռելեների ստուգում, փոխում – 1 հատ

**<u>Ռանչպար II ստորակայանի տրամադրման էլեկտրասարքավորումների թողարկման- կարգաբերման աշխատանքներ</u>**

- Ուժային տրանսֆորմատոր 35 ԿՎ լարման 10000 ԿՎԱ հզորության փաթույթային մեկուսացման և օհմային դիմադրության չափում, տրանսֆորմատորի յուղի խոնավության, ծակման լարման ստուգում և լրալցում, մեկուսիչների ստուգում, հողանցման ստուգում, ABB համակարգի հետազոտում, ղեկավարման վահանակի պաշտպանողական ռելեի փոխում - 1 հատ
- Սեփական կարիքի տրանսֆորմատորի (400 կվա) գծային բաժանիչների վերանորոգում- 1 հատ
- Ուժային տրանսֆոռմ 6/0.4 ԿՎ լարման, 400 ԿՎԱ հզորության, փաթույթային մեկուսացման և օհմային դիմադրության չափում, տրանսֆորմատորի յուղի խոնավության, ծակման լարման ստուգում և լրալցում, մեկուսիչների ստուգում, հողանցման ստուգում – 1 հատ

**Կատարող կազմակերպությունը պետք է ունենա շինարարության իրականացման ոչ պակաս 2-րդ դասի լիցենզիա՝ «Էլեկտրամոնտաժային աշխատանքներ (էլեկտրամոնտաժային աշխատանքներ, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ենթակայանային և հողմաէներգետիկ կայաններ)»** ներդիրով:

Աշխատանքների կատարման մեջ պետք է ներգրավվեն համապատասխան որակավորում և բարձր լարման (35 կՎ) էլեկտրական կայանքների հետ աշխատանքի համապատասխան թույլտվություն ունեցող մասնագետներ:

Աշխատանքների համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ մինչև 2025 թ. ոռոգման սեզոնի ավարտը:

Պայմանագրի գումարի 10%-ը Կատարողին վճարվում է երաշխիքային ժամկետի ավարտին:

**Աշխատանքների կատարման ժամկետը, բաց թողնված ամսվա պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանի ուժի մեջ մտնելու օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է աշխատանքը կատարել ավելի կարճ ժամկետում*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից :*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ | «Նորակ» ՍՊԸ |
| Երևան, Վարդանանց փակուղի 8 | Արարատի մարզ, գ. Մխչյան 25փ, թիվ 2 |
| «Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ | ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ |
| h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621 | h/h 2200133[illegible], ՀՎՀՀ 04203321 |
| Տնօրեն | Տնօրեն |
| ------------------- [illegible] | ------------------- [illegible] |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 2
« 11 » փետրվարի 2025 թ. կնքված
N: ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-25/8-1 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավեր-ով նախա-տեսված չափա-բաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV) | անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը |
| 1 | 45221700/501 | 1-դարձիչ շարժիչի, տիրիստորային ընդարձակիչների, ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքներ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 2 | 45221700/502 | 2-դարձիչ շարժիչի, տիրիստորային ընդարձակիչների, ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքներ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ` որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

| | |
|---|---|
| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ | «Նորակ» ՍՊԸ |
| Երևան, Վարդանանց փակուղի 8 | Արարատի մարզ, գ.Մ[illegible]ան 25փ, թիվ 2 |
| «Արդշինբանկ» ՓԲԸ, [illegible] մ/ճ | ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ |
| h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621 | h/h 2200133307370000, ՀՎՀՀ 04203321 |
| Տնօրեն | Տնօրեն |
| ---------------- [illegible]ՅԱՆ | ---------------- [illegible]ՅԱՆ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը`
______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «____________________» 20 թ.
Պայմանագրի համարը` ____________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը` հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները`

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
« 11 » փետրվարի 2025 թ. կնքված
N: ՀՀՏԿԵՆ-Ձ-ԳՀԱԾՁԲ-25/8-1 պայմանագրի

ԱԿՏ: N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________________-ի
(Պատվիրատուի անվանը) (Կատարողի անվանը)
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________-ին կնքված N ______________________
(պայմանագրի կնքման ամսաթիվը) (պայմանագրի համարը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

| Հանձնեց | Ընդունեց<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ________________________<br>ազգանուն, անուն | ________________________<br>ազգանուն, անուն |
| ________________________<br>ստորագրություն | ________________________<br>ստորագրություն |